ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հոկտեմբերի 4-ից 7-ը Ուզբեկստանի Հանրապետություն (ք.Տաշքենդ) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**

   Երջանիկ Հակոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ուզբեկստանի Հանրապետություն, ք.Տաշքենդ, հոկտեմբերի 4-ից 7-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի (ՄԾՂԽ) իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտե (ԻՍՂԿ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտեի 21-րդ նիստին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները՝**

   ԱՊՀ անդամ երկրների ՄԾՂԽ ԻՍՂԿ 21-րդ նիստի ժամանակ ամփոփվել են 2020 թվականին և 2021 թվականի առաջին 9 ամսում ԻՍՂԿ կատարած աշխատանքները, քննարկվել են ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների իրավապահ ստորաբաժանումների միջև համագործակցության վերաբերյալ մի շարք հարցեր, այդ թվում՝ մաքսային իրավախախտումների դեմ արդյունավետ պայքարելու նպատակով համատեղ միջոցառումների անցկացման, տեղեկատվության փոխանակման մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ և այլն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

   Հանդիպման ժամանակ ստորագրվել են հետևյալ որոշումները.

   - ԱՊՀ անդամ երկրների ՄԾՂԽ ԻՍՂԿ նախագահ ընտրելու վերաբերյալ,

- Մաքսային ոլորտում հանցագործությունների և իրավախախտումների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ Ուզբեկստանի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի աշխատանքների կազմակերպման վերաբերյալ,
- Մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածում ԱՊՀ անդամ երկրների ՄԾՂԽ ԻՍՂԿ գործունեության ռազմավարության միջոցառումների իրագործման պլանի հաստատման վերաբերյալ,
- «Ֆիլտր 1» և «Ֆիլտր 2» միջազգային մաքսային հատուկ միջոցառումների արդյունքների և ենթաակցիզային ապրանքների տեղափոխման ժամանակ մաքսային իրավախախտումներին հակազդելու ուղղությամբ իրականացվող միջոցառումների շրջանակներում ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների իրավապահ ստորաբաժանումների փոխգործակցության զարգացման վերաբերյալ,
- Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ներմուծման ժամանակ ԱՊՀ անդամ երկրների օրենսդրությունների խախտմանը հակազդելու մասով ակտուալ հարցերի վերաբերյալ,
- ԱՊՀ տարածքում օպերատիվ վերլուծության իրականացման նպատակով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության դեպքերի, ինչպես նաև դրանք կատարած անձանց մասով տեղեկատվության փոխանակման կազմակերպման վերաբերյալ,
- «COVID-19» համավարակի պայմաններում թմրամիջոցների միջազգային ապօրինի շրջանառության ոլորտում հանցավոր գործունեությանը հակազդման հարցերի վերաբերյալ,
- Հատուկ միջոցառումների, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների և «վերահսկելի մատակարարում» միջազգային միջոցառումների կազմակերպման և անցկացման փորձի վերաբերյալ,
- «Ինտերնետ առևտուր» միջազգային մաքսային հատուկ միջոցառման արդյունքների և միջազգային փոստային առաքումների ու էքսպրես-բեռների միջոցով արգելված օբյեկտների տեղափոխման մասով սպառնալիքների մատրիցային մոդելի մշակման վերաբերյալ,

- Օպերատիվ ստուգումների և մաքսային կանոնների խախտման գործերով վարույթների հետ կապված միջազգային հարցումների ապահովման վերաբերյալ,
- Վարչական իրավախախտումների գործերով վարույթի իրականացման առանձնահատկությունների մասով ձևավորվող պրակտիկայի և ԱՊՀ անդամ երկրների վարչական, քրեական և քրեադատավարական օրենսդրությունների փոփոխությունների վերաբերյալ,
- ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների իրավապահ ստորաբաժանումների աշխատակիցների որակավորման բարձրացման մասով միջոցառումների անցկացման վերաբերյալ,
- Պրակտիկ գործունեության մեջ օգտագործման նպատակով ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանումների աշխատանքների արդյունքների մասին տեղեկատվության հավաքման, ամփոփման և փոխանակման մասով աշխատանքների կատարելագործման վերաբերյալ,
- ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների կողմից կինոլոգների և ծառայողական շների պատրաստության մասով խնդրահարույց հարցերի և դրանց լուծման առաջարկների վերաբերյալ,
- Համաշխարհային մաքսային կազմակերպության իրավապահ աշխատանքների՝ ԱՊՀ անդամ երկրների «RILO-Մոսկվա» տարածաշրջանային կապի հանգույցի 2022 թվականի աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ,
- ԱՊՀ անդամ երկրների ՄԾՂԽ ԻՍՂԿ 2022 թվականի աշխատանքային պլանի նախագծի հաստատման վերաբերյալ,
- Սահմանապահ զորքերի ղեկավարների խորհրդի էգիդայի ներքո սահմանապահ հատուկ համատեղ միջոցառումների անցկացման փորձի վերաբերյալ,
- Աֆղանստանի իրավիճակի հետ կապված ահաբեկչական սպառնալիքների վերաբերյալ,

- ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտեի 21-րդ նիստի անցկացման վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ուժեղացնել հսկողությունը թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների միջազգային ապօրինի շրջանառությանը հակազդելու, ինչպես նաև ծխախոտների ապօրինի տեղափոխման դեմ պայքարի ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԵՐՋԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN YERJANIK 6912880398

11.10.2021թ.